ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ապրիլի 2024 թվականի N 567 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 25-Ի N 1392-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական հիմնարկները վերակազմակերպելու, «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 28-ի N 661 որոշման մեջ փոփոխություններ կատարելու և 1996 թվականի մայիսի 15-ի N 150 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1392-Ն որոշման (այսուհետ՝ որոշում)՝

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական հիմնարկները վերակազմակերպելու, «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» և «Հայաստանի Հանրապետության հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների օրինակելի կանոնադրությունները հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 28-ի N 661 որոշման մեջ փոփոխություններ կատարելու և 1996 թվականի մայիսի 15-ի N 150 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին».

2) 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2.1-ին և 2.2-րդ ենթակետերով.

«2.1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը՝ համաձայն N 4 հավելվածի և Կառավարման նոր համակարգի անցում չկատարած ուսումնական հաստատությունների կառավարումը՝ համաձայն N 5 հավելվածի:

2.2. Սահմանել, որ սույն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի դրույթները տարածվում են բոլոր այն ուսումնական հաստատությունների վրա, որոնք անցում են կատարում «Հանրակրթության մասին» օրենքով սահմանված կառավարման նոր համակարգի: Կառավարման նոր համակարգի անցում չկատարած ուսումնական հաստատությունների վրա տարածվում են սույն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի դրույթները՝ բացառությամբ նշված հավելվածի 4-րդ գլխի կարգավորումների, որոնք սահմանվում են N 5 հավելվածով:».

3) 4-րդ կետի «ե» ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «զ» ենթակետով.

«զ) կրթական, սպորտային և մշակութային միջոցառումների ընթացքում սննդի և (կամ) կացության կազմակերպում:».

4) 5-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5.1-5.4-րդ ենթակետերով.

«5.1. Սահմանել, որ կենտրոնացված վարչատնտեսական կառավարման անցած դպրոցների դեպքում պատասխանատու ստորաբաժանում է համարվում՝

1) կառավարման նոր համակարգի անցած դպրոցների դեպքում՝ վարչատնտեսական մասի համակարգողը.

2) կառավարման նոր համակարգի անցում չկատարած դպրոցների դեպքում՝ ուսումնական հաստատության տնօրենը:

5.2. Սահմանել, որ սույն որոշմամբ դպրոցներին վերաբերող բոլոր կարգավորումները վերաբերելի են նաև մասնագիտացված հանրակրթական դպրոցներին՝ բացառությամբ այն դեպքերի, որտեղ տարանջատված են մասնագիտացված հանրակրթական դպրոցների մասով կարգավորումները:

5.3. Սահմանել, որ մինչև կառավարման նոր համակարգի անցնելը պետական հանրակրթական ուսումնական հաստատությունները շարունակում են գործել իրենց կանոնադրությունների հիման վրա:

5.4. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին, Հայաստանի Հանրապետության մարզպետներին, ինչպես նաև Երևանի քաղաքապետին (առաջարկությամբ)՝ ըստ ենթակայության, ապահովել կառավարման նոր համակարգի անցած պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների կանոնադրությունների փոփոխությունը՝ գործադիր մարմիններից մեկի նշանակումից հետո՝ մեկամսյա ժամկետում:»:

2. N 3 հավելվածի՝

1) 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Մասնագիտացված հանրակրթական դպրոցը (այսուհետ՝ մասնագիտացված դպրոց) ընդհանուր հանրակրթական ծրագրերի հիմքի վրա սովորողների խորացված հանրակրթություն ապահովելու նպատակով իրականացնում է ռազմագիտության, սպորտի, գիտության, արհեստների կամ արվեստի որևէ բնագավառում հանրակրթական հիմնական մասնագիտացված ծրագրեր:».

2) 9-րդ կետում «Դպրոցը կարող է ունենալ» բառերը փոխարինել «Դպրոցն ունի» բառերով.

3) 10-րդ կետը «հաշվեկշիռ» բառից հետո լրացնել «և պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության

կողմից լիազորված պետական կառավարման մարմնի գանձապետարանում հաշիվ (հաշիվներ)» բառերով.

4) 15-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«15. Դպրոցի գործունեության առարկան յուրաքանչյուր սովորողի կրթության կազմակերպումն է՝ հանրակրթական հիմնական և լրացուցիչ ծրագրերի իրականացման միջոցով:

ա. Դպրոցը կարող է իրականացնել նախադպրոցական ավագ խմբի (5-ից մինչև 6 տարեկան հասակը) ծրագրեր՝ նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնելու համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում:

բ. Նախադպրոցական ուսումնական հաստատություն չունեցող բնակավայրում գործող դպրոցը կարող է իրականացնել նաև նախադպրոցական (3-ից մինչև 5 տարեկան հասակը) ծրագրեր՝ նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնելու համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում:

գ. Մասնագիտացված դպրոցը մշակում է և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) հաստատմանը ներկայացնում մասնագիտացված հանրակրթական ծրագրեր:».

5) 16-րդ կետում «արդյունքների» բառը փոխարինել «վերջնարդյունքների» բառով.

6) 16-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «ա» պարբերությամբ.

«ա. մասնագիտացված դպրոցը կազմակերպում է բացառիկ ընդունակություններ ունեցող, շնորհալի կամ արտասովոր կարողություններով օժտված երեխաների կրթության գործընթացը՝ մասնագիտացված հանրակրթական ծրագրերի ուսուցման համար ապահովելով անհրաժեշտ առանձնահատուկ պայմաններ: Մասնագիտացված դպրոցը կազմակերպում է դասընթացներ և պարապմունքներ այլ հանրակրթական դպրոցների բացառիկ ընդունակություններ ունեցող, շնորհալի երեխաների հետ՝ հնարավորություն ստեղծելով ռազմագիտության, սպորտի, գիտության արհեստների կամ արվեստի որևէ բնագավառում հանրապետական, միջազ-

գային մրցույթներում, փառատոներում, դպրոցականների առարկայական օլիմ-պիադաներում, միջազգային օլիմպիադաներում բարձր արդյունքներ ցուցաբերելու համար։».

7) 18-րդ կետում՝

ա. 5-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) սովորողների սննդի կազմակերպում և սննդի կազմակերպման համար դպրոցահեն այգիների ու ջերմոցների ստեղծում, որը նպատակաուղղված է նաև գործնական և նախագծային աշխատանքների իրականացմանը և սովորողների մոտ ձեռնարկատիրական հմտությունների զարգացմանը.»,

բ. 7-րդ ենթակետում «կամ» բառը փոխարինել «և (կամ)» բառերով.

8) 19-րդ կետի՝

ա. 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) հանրակրթական լրացուցիչ ծրագրերի իրականացում.»,

բ. 5-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) սովորողների սննդի կազմակերպում.»,

գ. 5-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6-րդ ենթակետով.

«6) կրթական, սպորտային և մշակութային միջոցառումների ընթացքում սննդի և (կամ) կացության կազմակերպում։».

9) 23-րդ կետը «արդյունքի» բառից հետո լրացնել «՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 30-ի N 954-Ն որոշման» բառերով և լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Մասնագիտացված դպրոցում դասարանները ձևավորվում են հաստատու-թյան առանձնահատկություններից ելնելով և ամրագրվում են տվյալ հաստատության կանոնադրությամբ։».

10) 24-րդ կետում «Հանրակրթական ծրագրերի ավարտին ստուգվում է հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին սովորողների գիտելիքների,

կարողությունների և հմտությունների համապատասխանությունը,» բառերը փոխարինել «Հանրակրթական ծրագրերի ավարտին ստուգվում են հանրակրթության պետական չափորոշչով սահմանված վերջնարդյունքները,» բառերով.

11) 26-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«26. Ուսումնական պլանները կազմվում են հանրակրթության պետական չափորոշչին համապատասխան՝ ուսումնական պլանի ընդհանրական կառուցվածքի և ուսումնական պլանի կազմման կանոնների հիման վրա:».

12) 27-րդ կետի՝

ա. 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) նախարարությունը կամ տարածքային կառավարման մարմինը կամ Երևանի քաղաքապետարանը (այսուհետ՝ լիազորված մարմին),

բ. 3-րդ ենթակետը «խորհուրդը» բառից հետո լրացնել «(այսուհետ՝ խորհուրդ)» բառերով,

գ. 4-րդ ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություններով.

«Դպրոցի տնօրենի և համակարգողի պաշտոնները կարող են զբաղեցնել «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի պահանջներին համապատասխանող անձինք: Դպրոցն անցնում է «Հանրակրթության մասին» օրենքով սահմանված կառավարման նոր համակարգի՝ տնօրենի թափուր տեղ առաջանալու պահից:».

13) 28-րդ կետում «վերջնականապես» բառը փոխարինել «վերջնական» բառով.

14) 31-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«31. Լիազորված մարմնի լիազորություններն են՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով իր ենթակայության տակ գտնվող դպրոցի տնօրենի և համակարգողի հետ հիմնադրի անունից աշխատանքային պայմանագրի կնքումը՝ հինգ տարի ժամկետով.

2) դպրոցի կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.

3) իր լիազորությունների սահմաններում դպրոցի կոլեգիալ կառավարման և գործադիր մարմինների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և

սույն կանոնադրության պահանջներին հակասող որոշումները, հրամաններն ու կարգադրությունները կասեցնելը կամ ուժը կորցրած ճանաչելը.

4) դպրոցի գործունեության մասին հաշվետվությունների լսումը, գործունեության՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրականացված ստուգումների կամ վերստուգումների արդյունքները քննումը.

5) դպրոցին ամրացված՝ պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ վերահսկողության իրականացումը.

6) «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 22-րդ հոդվածին համապատասխան՝ խոշոր գործարքներ կատարելու մասին համաձայնություն տալը.

7) գույքն ուղղակի ձևով, մրցույթով կամ աճուրդով վարձակալության տրամադրման նպատակով դպրոցի տնօրենի առաջարկությամբ գույքի կառավարման կոմիտե հայտի ներկայացումը.

8) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը:».

15) 32-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«32. Պետական ուսումնական հաստատությունն ունի կոլեգիալ կառավարման մարմին՝ խորհուրդ: Նախարարության սահմանած կարգով՝ ըստ ենթակայության գործող դպրոցների միավորմամբ կարող է ձևավորվել նաև միասնական խորհուրդ: Խորհրդի անդամ չի կարող առաջադրվել դպրոցի տնօրենի և համակարգողի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր, քույր) անձը: Հաստատության տնօրենը և վարչատնտեսական մասի համակարգողը չեն կարող լինել տվյալ հաստատության խորհրդի կամ այն միասնական խորհրդի կազմում, որում ընդգրկված է տվյալ հաստատությունը:».

16) 33-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«33. Խորհուրդը՝

1) հաստատում է իր աշխատակարգը, նիստերի օրակարգը, ժամանակացույցը և սահմանված կարգով ընտրում խորհրդի նախագահ.

2) աջակցում է ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարմանը, վերահսկում է զարգացման ծրագրի ժամանակացույցով սահմանված տարեկան գործողությունների իրականացումը, լսում է զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվությունը և տալիս եզրակացություն.

3) հաստատում է դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական, այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները, իսկ մասնագիտացված դպրոցի խորհուրդը՝ նաև դպրոցի սովորողների ընդունելության ընթացակարգը.

4) քննարկում է ուսումնադաստիարակչական գործունեության, այդ թվում՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների իրականացման մասին հաշվետվությունները.

5) քննարկում է ներքին և արտաքին գնահատման արդյունքները.

6) լիազորված մարմին է ներկայացնում առաջարկություններ՝ ուսումնական հաստատության գործունեության բնագավառին, նպատակներին և խնդիրներին համապատասխան.

7) հիմնադրի կողմից սահմանված կարգով սահմանում է դպրոցի շահույթի բաշխման ուղղությունները և չափերը.

8) սահմանված կարգով լիազորված պետական մարմնին ներկայացնում է առաջարկություններ դպրոցի տարեկան ծախսերի նախահաշվի նախագծի վերաբերյալ.

9) քննարկում է դպրոցի տարեկան հաշվապահական և այլ հաշվետվություններ.

10) սույն կետի 2-րդ ենթակետի համաձայն տրված եզրակացության հիման վրա խորհրդի անդամների (միասնական խորհրդի դեպքում՝ առաջադրված միայն տվյալ հաստատության մանկավարժական, ծնողական խորհուրդների և տվյալ մարզպետի աշխատակազմի և (կամ) համայնքի ղեկավարի կողմից) ընդհանուր թվի երկու երրորդի համաձայնությամբ, հիմք ընդունելով լիազոր մարմնի սահմանած կատարողական ցուցանիշներն ու պահանջները, կարող է անվստահություն հայտնել տնօրենին և նրա լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին առաջարկությամբ դիմել համապատասխան լիազոր մարմնի ղեկավարին՝

կից ներկայացնելով լիազորությունները դադարեցնելու անհրաժեշտությունը հիմնավորող փաստարկներ.

11) վերահսկողություն է իրականացնում կրթահամալիրի՝ ըստ նշանակության որպես համայնքային կենտրոնի օգտագործման նկատմամբ (նախադպրոցական և դպրոցական կրթություն, ոչ ֆորմալ կրթություն, մարզաձևերով զբաղվելու հնարավորություն, մշակութային և համայնքային միջոցառումներ, ուսուցում ամբողջ կյանքի ընթացքում, շարունակական կրթություն մեծահասակների համար), ինչպես նաև կրթահամալիրի՝ որպես համայնքային կենտրոնի գործունեության (լիարժեք ծառայություն համայնքի բնակիչներին և ըստ անհրաժեշտության՝ որպես արտադպրոցական կրթական ծրագրի բաղադրիչներ՝ խմբակի ձևաչափով բնակավայրի մշակութային, տեխնոլոգիական, մարզական միջավայրերի և ենթակառուցվածքների ապահովում) նկատմամբ.

12) հաստատում է կրթահամալիրի մարզադահլիճի և հանդիսությունների սրահի միջոցառումների և մրցումների տարեկան պլանը և հաշվետվությունը.

13) որոշում է ընդունում «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին համապատասխան՝ խոշոր գործարքներ կատարելու մասին.

14) իրականացնում է օրենքով, հիմնադրի կողմից իրեն վերապահված այլ լիազորություններ:».

17) 39-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) խորհրդի յուրաքանչյուր նիստից հետո (հեռավար ձևաչափով անցկացված նիստից հետո՝ արձանագրությունն ստորագրելուց հետո), երկու աշխատանքային օրվա ընթացքում, նիստի արձանագրությունը (միասնական խորհրդի դեպքում՝ յուրաքանչյուր դպրոցի մասով՝ առանձին) ներկայացնում է հրապարակման՝ տվյալ դպրոցի պաշտոնական կայքում:».

18) 42-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«42. Խորհրդի նիստերը կարող են գումարվել հեռավար՝ տեսակապով (բացառությամբ դպրոցի տնօրենին անվստահություն հայտնելու նպատակով գումարված նիստերի): Հեռավար ձևաչափով անցկացվող խորհրդի նիստերը

տեսաձայնագրվում են՝ հիմք հանդիսանալով քարտուղարի կողմից արձանագրության կազմման և նիստի անցկացման օրվանից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում անդամների կողմից այն ստորագրվելու համար։».

19) 43-րդ կետում «Միացյալ» բառը փոխարինել «Միասնական» բառով.

20) 44-րդ կետից հանել «միայն» բառը.

21) 48-րդ կետի՝

ա. 2-րդ ենթակետից հանել «և հաստատվում է նրա կողմից» բառերը,

բ. 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) կրթության կառավարման տեղեկատվական համակարգում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության հիմնական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկի հիման վրա մուտքագրում է ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ հաստիքները.»,

գ. 7-րդ ենթակետը «ուսումնական» բառից առաջ լրացնել «(այդ թվում՝ նախակրթարանի)» բառերով,

դ. 10-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10) նախարարի 2013 թվականի ապրիլի 15-ի N 396-Ն հրամանով հաստատած՝ ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգի հիման վրա մշակում և խորհրդի հաստատմանն է ներկայացնում դպրոցի ուսուցչի թափուր տեղի համար անցկացվելիք մրցույթի կարգը, ինչպես նաև խորհրդի հաստատմանն է ներկայացնում դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական, այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները.»,

ե. 11-րդ ենթակետում «օպերատորի» բառը փոխարինել «էլեկտրոնային կառավարման և դասավանդման ապահովման մասնագետի» բառերով.

22) 51-րդ կետը «հաշվապահ» բառից առաջ լրացնել «գլխավոր» բառով.

23) 52-րդ կետի՝

ա. 2-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել,

բ. 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) կրթության կառավարման տեղեկատվական համակարգում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության հիմնական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական աշխատողների պաշտոնների անվանացանկի հիման վրա մուտքագրում է վարչատնտեսական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ հաստիքները.»,

գ. 4-րդ ենթակետը «գնահատում է» բառերից առաջ լրացնել «վերլուծում և» բառերով, «նախահաշիվը և» բառերից հետո լրացնել «իր կողմից ստորագրված նախահաշիվը» բառերով,

դ. 9-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9) սահմանում է դպրոցի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը.»,

ե. 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10) ապահովում է հաշվապահական հաշվառում վարելը, ֆինանսական հաշվետվություններ պատրաստելն ու ներկայացնելը.»,

զ. 12-րդ ենթակետում «բացում է հաշվարկային և գանձապետական հաշիվներ» բառերը փոխարինել «պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմնի գանձապետարանում բացում է հաշիվ (հաշիվներ)» բառերով,

է. 13-րդ ենթակետը «միջոցները» բառից հետո լրացնել «, կնքում է պայմանագրեր» բառերով.

24) 56-րդ կետը «դրանք» բառից հետո լրացնել «գրավոր» բառով.

25) 63-րդ կետը «հաշվապահ» բառից առաջ լրացնել «գլխավոր» բառով.

26) 64-րդ կետում «Տնօրենի տեղակալի, ինչպես նաև այլ մանկավարժական» բառերը փոխարինել «Դպրոցի մանկավարժական և վարչատնտեսական աշխատողների» բառերով.

27) 65-րդ կետի՝

ա. 1-ին ենթակետում «մեկօրյա ժամկետում» բառերը փոխարինել «մեկ աշխատանքային օրվա ընթացքում» բառերով,

բ. 6-րդ ենթակետում «ամրապնդմանն» բառը փոխարինել «ամրապնդման, մտավոր» բառերով,

գ. 8-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8) դասավանդող ուսուցիչների, այլ մանկավարժական աշխատողների և սովորողների ծնողների հետ համագործակցելով՝ դասարանում ապահովում է բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտ։».

28) 66-րդ կետում «դաստիարակչական աշխատանքները համակարգողի» բառերը փոխարինել «կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքները համակարգողին» բառերով.

29) 66-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Դպրոցը կարող է ունենալ նաև դասղեկի առանձին հաստիք։».

30) 68-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

31) 70-րդ կետում «երկու առավել ձայն հավաքած ներկայացուցիչները» բառերը փոխարինել «առավել ձայն հավաքած երկու ներկայացուցիչները» բառերով.

32) 71-րդ կետի՝

ա. 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) հանրակրթության պետական չափորոշչի պահանջների համաձայն՝ հանրակրթական հիմնական ծրագրերի իրագործման հարցերը՝ սովորողների նախասիրություններին ու ընդունակություններին համապատասխան՝ ապահովելով նրանց կյանքի և առողջության պահպանումը և նախադպրոցական կրթության պետական չափորոշչի պահանջների համաձայն՝ նախադպրոցական ծրագրերի պահանջներին համապատասխան տարեկան աշխատանքային պլանը և դրան առնչվող հարցերը (նախակրթարանի առկայության դեպքում).»,

բ. 7-րդ ենթակետը «ուսումնական» բառից առաջ լրացնել «դպրոցի և նախակրթարանի (առկայության դեպքում)» բառերով.

33) 72-րդ կետի 1-ին ենթակետը «դպրոցի» բառից հետո լրացնել «(այդ թվում՝ նախակրթարանի)» բառերով.

34) 74-րդ կետը «քարտուղար» բառից հետո լրացնել «՝ տվյալ նիստն արձանագրելու համար» բառերով.

35) 84-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություններով.

«Առարկայական մեթոդական միավորումն ունենում է ղեկավար: Առարկայական մեթոդական միավորման ղեկավարը պարտավոր է մասնակցել «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից իրականացվող վերապատրաստումներին:».

36) 87-րդ կետի՝

ա. 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) նպաստում է ուսուցիչների մասնագիտական և դասավանդման որակի բարձրացմանը, մեթոդական միավորման ղեկավարի համակարգմամբ տվյալ առարկայական մեթոդական միավորման՝ մինչև 5 տարվա աշխատանքային ստաժ ունեցող ուսուցիչների մոտ, առնվազն 6 ամիս՝ շաբաթական առնվազն 1-անգամյա պարբերականությամբ, իրականացնում է դասալսումներ, տրամադրում մեթոդական աջակցություն.»,

բ. 6-րդ ենթակետում «սեմինարներ» բառից հետո հանել «, մանկավարժական-մեթոդական ընթերցումներ» բառերը,

գ. 5-րդ և 7-րդ ենթակետերից հանել «(դասվարներին)» բառը.

37) 92-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Ծնողական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն երեք ամիսը մեկ անգամ, անհրաժեշտության դեպքում գումարվում են արտահերթ նիստեր:».

38) 104-րդ կետում «համակարգողը» բառը փոխարինել «կառավարման նոր համակարգի անցած դպրոցների դեպքում՝ համակարգողը» բառերով.

39) 107-րդ կետի 2-րդ ենթակետում «ուսումնական հաստատությունը» բառերը փոխարինել «դպրոցը» բառով և 7-րդ ենթակետում «ուսումնական հաստատության» բառերը փոխարինել «դպրոցի» բառով.

40) 7-րդ և 8-րդ գլուխները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. ԴՊՐՈՑԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՆՐԱՆ ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

119. Դպրոցի սեփականությունը ձևավորվում է դպրոցի հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող,

ինչպես նաև դպրոցի գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից:

120. Դպրոցն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը: Դպրոցի սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ հիմնադիրը չունի իրավունքներ՝ բացառությամբ պետական կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:

121. Դպրոցն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգի պահանջներին համապատասխան հանձնելու վարձակալության:

122. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգի համաձայն՝ դպրոցին անհատույց օգտագործման իրավունքով ամրացված տարածքների վարձակալությունից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե մուտքագրված միջոցներից դպրոցի կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմնի միջոցով փոխանցված միջոցները դպրոցը, որպես լրացուցիչ հատկացում, կարող է օգտագործել բացառապես իր կանոնադրական նպատակներով:

123. Դպրոցի գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրագործման համար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 2-ի N 1579-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան:

124. Դպրոցի ֆինանսական միջոցները գոյանում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

125. Դպրոցը կարող է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած մրցութային կարգով և ուղիղ դրամաշնորհի ձևով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ստանալ լրացուցիչ ֆինանսավորում:

126. Դպրոցի ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

1) օրենքով կամ հիմնադրի սահմանած ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները.

2) բարեգործական, նպատակային ներդրումները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրաբերությունները ու նվիրատվությունները:

127. Դպրոցի գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են հիմնադիրը, լիազորված պետական մարմինը, հիմնադրի կողմից լիազորված, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ պետական կառավարման մարմինները:

8. ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

128. Դպրոցը վերակազմակերպվում և լուծարվում է օրենսդրությամբ սահմանված կարգով:

129. Դպրոցը կարող է վերակազմակերպվել հարյուր տոկոս պետական մասնակցությամբ ընկերության կամ հիմնադրամի:

130. Դպրոցի լուծարման դեպքում դպրոցի պարտատերերի պահանջները բավարարելուց հետո դրամական միջոցները փոխանցվում են պետական բյուջե, իսկ այլ գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:»:

3. Որոշումը լրացնել նոր՝ NN 4 և 5 հավելվածներով՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

22.04.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ